Հավելված
ՀՀ փոխվարչապետի N 156 - Ա
որոշման

Ծ Ր Ա Գ Ի Ր

ՀԵՆԱՇԱՐԺՈՂԱԿԱՆ ԽՆԴԻՐՆԵՐ ՈՒՆԵՑՈՂ ՎԻՐԱՎՈՐ ՔԻՆՎՈՐՆԵՐԻ ՀԱՄԱՐ ՀԱՐՄԱՐԵՑՎԱԾ ՏՆԵՐԻ ԿԱՌՈՒՑՈՒՄ

1.	Ծրագրի նպատակը	Ծրագրի նպատակներն են. 1. Ստեղծել հարմարավետ կենցաղային պայմաններ ու միջավայր ծրագրի շահառուների համար: 2. Բարձրացնել շահառուների կյանքի որակը, հնարավորություն տալ վարել ակտիվ կենսակերպ՝ նպաստելով զինվորական ծառայության/հայրենիքի պաշտպանության ժամանակ վնասվածք, խեղում կամ հիվանդություն ձեռք բերած անձանց սոցիալական վերաինտեգրմանը: 3. Ստեղծել հնարավորություն մարզաբնակ շահառուներին ունենալ կացարան մայրաքաղաքին մոտ՝ ուսանելու կամ ամբուլատոր պայմաններով տևական բուժում ստանալու ժամանակահատվածում:
2.	Ծրագրի բարեգործական որակման նպատակը	Ակնկալվում է ծրագրի շրջանակներում օգտվել ՀՀ հարկերի գծով օրենքով սահանված արտոնություններից:

3.	Բարեգործը	1. «Ընտանիքի փրկության ֆոնդ» («Family Rescue Fund») հիմնադրամ Հասցե՝ ԱՄՆ, Գլենդել, Հարվարդի փ. 105 Հարկային կոդ՝ 47-4095670, 2. «Վեթերանս օֆ Արմենիա» (Veterans of Armenia) Հասցե՝ 1146 N Գլխավոր պ. #684 Գլենդել Կ.Ա. 91202 Հարկային կոդ՝ 85-3766890, 3. Հայ օգնության միություն Իրավաբանական հասցե՝ Նալբանդյան 116/24 ՀՎՀՀ 01512885, 4. Ուան Արմենիա բարեգործական հասարակական կազմակերպությունը Հասցե՝ ՀՀ, քաղ. Երևան, Մելիք Ադամյան 2/2, 5-րդ հարկ ՀՎՀՀ՝ 02622324, 5. «Լիրա-Ա» բարեգործական հիմնադրամ («Лира-А» Благотворительный фонд) Հասցե՝ 142007, Մոսկվայի շրջան, ք. Դոմոդեդովո, Իլյուշկինի փ., տ. 2 Հարկային կոդ՝ 5009125444, 6. Այլ ոչ առևտրային կազմակերպությունների և անհատների հանգանակություններ:
4.	Ծրագիրը կատարողը	«Զինվորի տուն» բարեգործական հասարակական կազմակերպություն Իրավաբանական հասցե՝ քաղ. Երևան, Աբովյան 58 ՀՎՀՀ 00904586
5.	Ծրագրի իրականացման վայրը և բնագավառը	ՀՀ, համայնք Աբովյան, գյուղ Բալահովիտ 7-րդ փողոց 1/2, սոցիալական բնագավառ
6.	Ծրագրի բյուջեն	Ծրագրի բյուջեն 900,000,000 դրամ է
7.	Բարեգործությունն ստացողը	Ծրագրի շահառու են հանդիսանում զինվորական ծառայության ընթացքում վնասվածք խեղում կամ հիվանդություն ձեռք բերած անձինք:

8.	Ծրագրի իրականացման տևողությունը	10/03/2023 թ. – 10/03/2027 թ.
9.	Միջոցառումների նկարագրությունը և ժամկետները անհրաժեշտ ֆինանսական միջոցների ծավալը	Բնակելի համալիրը նախատեսվում է կառուցել հետևյալ հասցեով՝ ՀՀ Կոտայքի մարզ, գյուղ Բալահովիտ, 7-րդ փողոց, թիվ 1/2 հողամաս: Ծրագրի շրջանակում նախատեսվում է կառուցել 8 մեկհարկանի առանձնատուն և 1 երկհարկանի կացարան, 1 մարզադահլիճ, կանաչապատ այգի, որոնք ամբողջությամբ հարմարեցված կլինեն տեղաշարժման խնդիր ունեցող անձանց կարիքներին: Առանձնատների կառուցումից հետո՝ յուրաքանչյուր տուն իր համար սահմանազատված հողամասի հետ միասին պետք է նվիրաբերվի շահառուներին, իսկ կացարանը նախատեսված է լինելու այն մարզաբնակ շահառուների համար, որոնք տևական ժամանակ մասնակցելու են կազմակերպության կողմից իրականացվող ուսումնական ծրագրերին և/կամ ցերեկային ստացիոնար կամ ամբուլատոր բուժում են ստանալու «Զինվորի տուն» վերականգնողական կենտրոնում: Բուժման կամ ուսման ընթացքում կացարանը շահառուներին տրամադրվելու է անհատույց օգտագործման իրավունքով: 1. Կառուցապատում - 550.000.000 դրամ, 2. Տարածքի բարեկարգման աշխատանքներ - 150.000.000 դրամ, 3. Կահավորում - 200.000.000 դրամ: Միջոցառումները նախատեսված է իրականացնել 10/03/2023 թ. – 10/03/2027 թ.:

10.	Ձեռք բերվող (ներմուծվող) ապրանքների ու ծառայությունների համառոտ նկարագիրը, ծավալները և նախատեսվող գինը	1. Նախագծանախահաշվային փաստաթղթերի կազմում – 25,000,000 դրամ, 2. Տեխնիկական վերահսկողության ծառայություններ - 25,000,000 դրամ, 3. Շինարարական աշխատանքների մասով ծառայությունների մատուցման պայմանագիր – 420,000,000 դրամ, 4. Ենթակառուցվածքների կառուցում - 80,000,000 դրամ, 5. Տարածքի բարեկարգում և կահավորում - 150,000,000 դրամ, 6. Կահույքի ձեռքբերում - 50,000,000 դրամ, 7. Սարքավորումների ձեռքբերում - 120,000,000 դրամ, 8. Կենցաղային տեխնիկայի ձեռքբերում - 30,000,000 դրամ:
11.	Ծրագրի իրականացման հետ կապված ծախսերը	Ծրագրի իրականացման հետ կապված կազմակերպական ծախսեր չեն նախատեսվում:
12.	Համագործակցությունը պետական կառավարման, տեղական ինքնակառավարման մարմինների, այլ կազմակերպությունների հետ	Ծրագրի շրջանակներում համագործակցություն չի նախատեսվում:
13.	Ծրագրի արդյունավետության նկատմամբ վերահսկողության մեղանիզմների նկարագրությունը	1. Օրենքով սահմանված կարգով տեղեկատվության ներկայացում ՀՀ կառավարության 2003 թվականի հունվարի 16-ի թիվ 66-Ն որոշմամբ հաստատված բարեգործական ծրագրերը բարեգործական որակելու և գրանցելու կարգի 25-րդ կետով սահմանված կարգով լիազոր մարմնին: 2. Հաշվետվությունների ներկայացում ծրագրի բարեգործներին:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՓՈԽՎԱՐՉԱՊԵՏ Տ. ԽԱՉԱՏՐՅԱՆ

02.03.2023
ՀԱՎԱՍՏՎԱԾ Է
ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ
ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅԱՄԲ